տի տարրկայ ընդունել խաչի նշանը. այսպիսի հայեացքի արդիւնք են և ապացոյց խաչի շարականների ծագումը Է. դարում և խաչերի ու խաչքարերի արուեստի ծագումը Է. դարից առաջ, և մանաւանդ աւելի յետոյ առանց պատկերագրութեան, երբեմն միայն սիմվոլիկ նշաններով։ Անանիա Սանահնեցին ԺԱ. դարի առաջի կիսին մերժելով խճողուած պատկերապաշտութիւնը, աւելացնում է. «Եւ զՔրիստոս կենդանի պատկեր միշտ ի խաչին խոստովանիմ», իսկ հակառակորդները (Յոյները և Վրացիք) առաւել քան զխաչ և զեկեղեցի պատուեն և պաշտեն զպատկերս»[1]։ Նման դիրք ունին բռնած նաև Խաչիկ կաթողիկոս և մանաւանդ Յովհաննէս Սարկաւագ վարդապետ[2]։ ԺԴ. դարի սկզբում իսկ Մխիթար Գոշը պարզ և որոշ յայտնում է. «յոյնք և վիրք զպատկերագրութիւն առաւել պատուեն և հայք զխաչ»[3]։ Խաչով խաչելութիւնը արտայայտելու աւանդութիւնը մեռած չէ Հայոց մէջ նոյն իսկ այս դարում. Էջմիածնից ոչ հեռու՝ Աշտարակ գիւղաքաղաքում՝ Թումաս քահանան կանգնել է 1267 թուին մի հոյակապ խաչարձան, առանց խաչելութեան պատկերի, մինչդեռ խաչի հորիզոնական թևերից վեր քանդակուած են արեգակ և լուսին, խաչելութեան յարակից նշանները (պատկ. 44)։

Բայց այս տեսութիւնը հիմք չպէտք է ծառայէ եզրակացնելու, թէ խաչելութեան պատկերագրութիւնն իսպառ վանուած էր հայ եկեղեցական արուեստից մինչև տասներորդ դար, մանաւանդ քաղկեդոնիկ հայերի շրջանում, երբ արդէն մանրանկար ունինք ձեռագիրների մէջ, իսկ խաչից իջեցնելու՝ ԺԱ. դարից։ Մեր նպատակն էր միայն պարզել, թէ խաչելութեան պատկերագրութեան գործածութիւնը չպէտք է ընդհանրացած լինէր մինչև Ը. դար, իսկ խաչից իջեցնելու տեսարանը ևս առաւել, իսկ այնուհետև էլ միայն հազուադէպ երևոյթ, որի մի օրինակն ունինք ԺԴ. դարից (պատկ. 21)։ Խաչքարը գտնւում է Վայոց ձորի Հերհեր աւանում, որ Ճահուանեցի իշխանների կեդրոնն էր[1]։ Արձանագրութիւնը մեզ տեղեկութիւն է տալիս կանգնողի և թուականի մասին.

> «Թվ ՉԽ։ / Ես Աղ/բարոս կ/անգնեցի / խաչս որ/դոյ իմոյ Ճահագին յաղաւթ յիշէք.»

Խաչքարը իւր օրնամենտացիայով և քանդակման եղանակով համապատասխան է ԺԴ. դարի արուեստին, բայց խաչի ձևը կեդրոնի պսակով, մանաւանդ խաչեցեալի երկար կոլոբիոնը, գլխի հազիւ նկատելի դէպի աջ թեքումը, ցոյց է, և բաց աչքերը, ոտքերի դիրքը աւելի հին աւանդութիւն են մատնանշում օրինակի ծագման, քան մեր Ամենափրկիչը։ Տարաբաղդաբար տեղում որևէ նկատողութիւն չենք արել Մարիամի և Յովհաննէսի շարժումների և դէպի խաչեցեալն ունեցած յարաբերութեան մասին. իսկ լուսանկարի մէջ բոլորովին պարզ չէ, բայց հաւանական է հանգիստ, առանց վշտի արտայայտութեան։ Բուն խաչքարի մեծութիւնն է 1,7×0,77 մ.։

Ժ. դարից և ԺԱ.ի առաջին քառորդից արդէն ունինք խաչելութեան մանրանկարներ հայ արուեստի մէջ, որոնք հաստատում են մեր տեսութիւնը Ամենափրկչի ծագման ժամանակի նկատմամբ, համեմատութեան նիւթ տալով։ Վիեննայի Մխիթարեանները հրատարակել են օտարազգի հայագէտների յօդուածների մի ժողովածու, նուիրուած Հանդէս Ամսօրեայի քառասնամեակին[2]։ Այդտեղ ի միջի այլոց August Merkի մի յօդուածը կայ Die Miniaturen des armenischen Evangeliars N 697 der Wiener Mechitharisten-bibliothek վերնագրով. ձեռագրական հա-

(1) Ձեռ. Էջմ. N 518։

(2) Առաքել. Տաճնազ. հրատ. 227–228։ Ձեռ. Էջմ. N 518։

(3) Արարատ. 1961 562։

(1) Ճահուռնեցիք մէկն էին Զաքարեանց օրով Հայաստանի քաղաքական վերածնութեան իշխանութիւններից, եւ ենթարկւում էին Օրբէլեաններին, որպէս նրանց սպարապետներ։ ԺԴ. դարի կէսերին սպառւում է այս տոհմի արական սերունդը եւ մնում է միայն Ամադին իշխանի եւ նորա կնոջ Թուխթանի միակ դուստր Նաթել, որին տան փեսայ են բերում եւ հայրենեաց ժառանգ Բուրթէլ Օրբէլեանի թոռն եւ Բեշքենի որդի Կուկը։ Թուխթանէն էր «դուստր Իւանէ Որու տան իշխեցողի, հայր քաջ քարտուղարի եւ երջանիկ քարունապետի Յովհաննէս վրդի», որ յայտնի Որոտնեցին է։ Յիշ. Վարդաշենի աւետարանի, մեր ժողովածուից։

(2) Monumenta Armenologica. Յիշատակարան Հանդէս Ամսօրեայի քառասնամեակի, նուիրուած օտարազգի հայագէտներէ. 1927. Վիեննա։